

«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

*Ավարտական հետազոտական
աշխատանք*

*Թեմա՝ Նախադպրոցականի քննադատական
մտածողության զարգացումը որպես չափորոշային
պահանջ*

Հաստատություն՝ Երևանի հ.98 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Հապետյան Եվգենյա

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

Բովանդակություն

| | |
|--|----|
| Ներածություն | 3 |
| 1.1 Քննադատական մտածողության էությունը և դրա դրա տարբեր մեկնաբանությունները..... | 5 |
| 1.2 Քննադատական մտածողության ձևավորումը ըստ չափորոշիչների | 7 |
| 1.3 Սաների քննադատական մտածողության ձևավորումը նախակրթական հաստատությունում | 9 |
| Եզրակացություն | 13 |
| Օգտագործված գրականության ցանկ | 15 |

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Հասարակական կյանքի անբաժանելի մաս հանդիսացող կրթությունը բոլոր դարաշրջաններում ուղղված է եղել հասարակության պահանջների բավարարմանը: Կրթության նպատակը մանկավարժության մեջ միշտ եղել է անփոփոխ՝ աճող սերունդը նախապատրաստել կյանքին, ձևավորել տվյալ ժամանակաշրջանի համար հասարակության լիարժեք, ակտիվ անդամներ, իսկ կրթության խնդիրներն անընդհատ փոփոխվել են՝ պայմանավորված նոր հասարակական պահանջների ձևավորմամբ, տվյալ հասարակության տնտեսական, գիտական, մշակութային զարգացմամբ:

Արդի մանկավարժական որոնումները նպատակ ունեն ուսուցման գործընթացը դարձնել այնպիսին, որ սաները դառնան այդ գործընթացի ակտիվ մասնակիցները, որ նրանց պասսիվ ունկնդրողի դերը փոփոխվի ակտիվ մասնակցի դերով: Դրա շնորհիվ սաները դառնում են առավել անկաշկանդ ու ինքնուրույն, նրանց մոտ ձևավորվում են ուսման դրական դրդապատճառներ, ճանաչողական հետաքրքրություններ ու կարողություններ:

Սաների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը ժամանակակից մանկավարժության կողմից դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Ճանաչողությունը մարդկային մտածողության մեջ իրականության արտացոլման ու վերարտադրման գործընթաց է, որն ապահովում է ճշմարտության իմացում, գիտելիքների ձեռքբերում, յուրացում, ցանկացած կատարած աշխատանքում ստեղծագործական մոտեցում:

Վերը նշված կարևորագույն խնդիրների լուծման նպատակով ժամանակակից մանկավարժության մեջ կիրառվում են բազմաթիվ մանկավարժական տեխնոլոգիաներ: Ուսուցման գործընթացի կատարելագործմանը, սաների ակտիվացմանը, ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը մեծապես նպաստում է մանկավարժական տեխնոլոգիաների շարքում իր ուրույն տեղն ունեցող քննադատական մտածողության տեխնոլոգիան: Քննադատական

մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր հանդիսանում է կրթության գլխավոր նպատակներից մեկը: Այս հետազոտության նպատակն է ստեղծել հիմք ձևավորելու քննադատական մտածողություն զարգացնող կրթական համակարգ: Քննադատական մտածողությունը ենթադրում է ապացուցումների համակարգ, որը կիրառվում է իրերի և իրադարձությունների վերլուծության համար՝ տալով հիմնավորված եզրակացություններ, և ստեղծում է հիմնավորված գնահատականներ, մեկնաբանություններ տալու հնարավորություն, ինչպես նաև իրավիճակին և խնդրին համապատասխան ճշգրտորեն կիրառել ստացված արդյունքները: Քննադատական մտածողությունը մտածողության այն տեսակն է, երբ մարդը հարցականի տակ է դնում ստացվող տեղեկույթի հավաստիությունը, սեփական հավատալիքներն ու համոզմունքները: Կա կարծիք, որ անցումը քննադատական մտածողությանը նոր քաղաքակրթության զարգացման անհրաժեշտ և կարևոր նախապայմանն է:

Քննադատական մտածողության համար անհրաժեշտ են գնահատելու, մեկնաբանություն, վերլուծություն, հետևություններ և եզրահանգումներ կատարելու կարողություններ ու հմտություններ, դիտողականություն:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Սույն աշխատանքով *նպատակ* ունենք ուսումնասիրելով քննադատական մտածողության ձևավորման պահանջը չափորոշիչներին համապատասխան:

Նպատակից բխում են հետևյալ **խնդիրները**.

1. Ներկայացնել քննադատական մտածողության էությունը և դրա դրա տարբեր մեկնաբանությունները.

2. Ուսումնասիրել քննադատական մտածողության ձևավորումը ըստ չափորոշիչների.

3 Ներկայացնել սաների քննադատական մտածողության ձևավորումը նախակրթական հաստատությունում:

1.1 Քննադատական մտածողության էությունը և դրա դրա տարբեր մեկնաբանությունները

Տարբեր հեղինակներ առաջ են քաշում քննադատական մտածողության տարբեր սահմանումներ: Ռոբերտ Յանգը նշում է, որ քննադատական մտածողությունը ենթադրում է իմացական հմտությունների (և ռազմավարությունների կիրառում, որը կմեծացնի ցանկալի արդյունքին հասնելու հավանականությունը¹: Ըստ նրա քննադատական մտածողությունը նպատակասլաց, պատճառաբանված, նպատակի իրագործմանն ուղղված մտածողություն է: Յանգը նաև նշում է, որ խնդրիների լուծման, հիմնավորված ենթադրությունների կառուցման, հավանականությունների հաշվարկման և որոշումների կայացման հիմքում պետք է ընկած լինի քննադատական մտածողությունը²: Ըստ նրա, այդպիսի մտածողություն ունեցող անհատները վերոնշյալ հմտություններն օգտագործում են գիտակցաբար, այսինք նախապես գնահատում են այն արդյունքի ազդեցությունը, որը ձեռք կբերվի մտածելու գործընթացի ավարտին:

Ռոբերտ Էննիսը, ով հանդիսանում է քննադատական մտածողության առաջատար մասնագետներից մեկը, քննադատական մտածողությունը սահմանում է, որպես «ողջամիտ և ռեֆլեկտիվ մտածողություն, որը միտված է որոշելու ինչին հավատալ կամ ինչ անել»³: Մեկ այլ աշխատության մեջ Էննիսը նշում է, որ քննադատաբար մտածելու նպատակն է գտնել ճշմարտությունը, կամ ճշմարտությանը ամենամոտ գտնվող պատասխանը⁴: Սակայն սա ամենևին չի նշանակում, որ խնդրի շուրջ քննադատաբար մտածելու արդյունքում կբացահայտվի ճշմարտությունը: Հետևաբար, ընկալումը, թե որն է

¹ Young, R. (1980). fostering Critical Thinking. In New Directions for Teaching and Learning (Vol. 3). San Francisco: Jossey-Bass.

² Նույն տեղում:

³ . Ennis, R. H. (1989). Critical Thinking and Subject Specificity: Clarification and Needed Research. Educational Researcher, 18 (3), 4-10.

⁴ Ennis, R. H. (2008). Nationwide Testing of Critical Thinking for Higher Education: Vigilance Required. Teaching Philosophy, 31 (1), 1-26.

ճշմարտություն, մեծապես կախված է մտածողի նախապաշարմունքից և հմտություններից:

Դեռևս 1962թ. նույն Ռոբերտ Էննիսը սահմանել է, որ քննադատական մտածողությունը՝ տարբեր պնդումների ճիշտ գնահատումն է⁵: Սակայն ինչպես տեսնում եմ, այս սահմանումը շատ լայն է պրակտիկ կիրառման համար: Առավել ընդգրկուն և մանրամասն սահմանում են ներկայացրել Միքայել Սկրիվենը և Ռիչարդ Փոլը: Նրանք նշում են, որ քննադատական մտածողությունը դա դիտարկման, փորձի, դատողության, պատճառաբանության և/կամ հաղորդակցության միջոցով հավաքած ինֆորմացիան ակտիվորեն և հմտորեն համակարգելու, կիրառելու, վերլուծելու, սինթեզելու և գնահատելու մտավոր գործընթաց է, որը ծառայում է որպես ուղեցույց անհատի համոզմունքների ձևավորման և գործողությունների համար⁶:

Կարելի է ասել, որ քննադատական մտածողությունն ունի երկու բաղկացուցիչ մաս. բաղկացուցիչներից մեկը ենթադրում է ինֆորմացիան և համոզմունքները գեներացնելու և վերամշակելու հմտությունների ամբողջություն, իսկ երկրորդը՝ այդ հմտություններն օգտագործելու սովորույթն է, որի արդյունքում ձևավորվում է սեփական վարքագիծն ուղղորդելու հիմքը:

Ռոբերտ Էննիսը, ում մասին արդեն խոսել եմ, իր՝ ‘Քննադատական մտածողության գնահատումը’ հոդվածում նշում է, որ քննադատաբար մտածելու ժամանակ սանը, որպես կանոն, իրականացնում է հետևյալ քայլերը. գնահատում է ինֆորմացիայի աղբյուրի հավաստիությունը; վեր է հանում եզրակացությունները, պատճառները և ենթարդությունները; գնահատում է փաստարկի որակը՝ հաշվի առնելով ներկայազված հիմնավորումները, ենթադրություններն ու վկայությունները; մշակում և պաշտպանում է խնդրի նկատմամբ սեփական դիրքորոշումը; հարցերի միջոցով հստակեցնում է խնդիրը; փորձարկում է սեփական դիրքորոշումը; եթե անհրաժեշտ է, սահմանում է համապատասխան եզրույթները; լինում է լայնամիտ և տեղեկացված, ինչպես

⁵ Ennis, R. H. (1962). A Concept of Critical Thinking. Harvard Educational Review, 29, 128-136.

⁶ Scriven, M., & Paul, R. (1987). 8th Annual International Conference on Critical Thinking and Educational Reform.

նաև, երբ արդեն վստահ է իր տեսակետի մեջ, զգուշավորությամբ, բայց կատարում եզրահանգումներ⁷:

Ինչպես արդեն նշել եմ , քննադատական մտածողության զարգացման համար կարևոր են և՛ դասավանդման մեթոդները, և՛ դասավանդվող առարկաները: Այս եզրահանգումն է արել նաև Ամերիկայի Օդային Հրամանատարության և Աշխատակազմի քոլեջի հետազոտող մայրը Լինդոն Մքրունը: Նա փորձել է հասկանալ, թե արդյոք քննադատական մտածողությունը պետք է դասավանդվի, որպես ընդհանուր, փոխանցելի հմտությունների միասնություն, թե որպես հմտությունների առանձին խմբեր՝յուրաքանչյուրը ներհատուկ որևէ ակադեմիական առարկայի⁸:

1.2 Քննադատական մտածողության ձևավորումը ըստ չափորոշիչների

Հանրակրթության պետական չափորոշի նախագիծը մշակելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով: Հանրակրթության պետական չափորոշի առանձին բաղադրիչների նախագծերի մշակման, ինչպես նաև առարկայական չափորոշիչների և ծրագրերի մշակման նպատակով հանձնաժողովն ստեղծում է մասնագիտական աշխատանքային խմբեր: Հանձնաժողովն աշխատանքային խմբերի մշակած նախագծերի հիման վրա ձևավորում է հանրակրթության պետական չափորոշի նախագիծը, որը սահմանված կարգով ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը: անրակրթության պետական չափորոշիչը (այսուհետ՝ Չափորոշիչ) ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական

⁷ Ennis, R. H. (1962). A Concept of Critical Thinking. Harvard Educational Review, 29, 141.

⁸ Major McKown, L. (1997, March). Improving Leadership Through Better Decision making: Fostering Critical Thinking. Retrieved September 14, 2011, from Air University: <http://www.au.af.mil/au/awc/awcgate/acsc/97-0506.pdf>

պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ), ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը: Հանրակրթական հիմնական ծրագրերը (տարրական, հիմնական և միջնակարգ) մշակվում են Չափորոշչի նորմերի և դրույթների համաձայն: Չափորոշիչը նպատակաուղղված է հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովմանը: Չափորոշչի պահանջները պարտադիր են հանրակրթական հիմնական և այլընտրանքային ծրագրերի, այդ թվում՝ առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների, դասագրքերի և ուսումնական գործընթացի բովանդակությանն առնչվող այլ ուսումնական նյութերի համար: Չափորոշչի պահանջները պարտադիր են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից և ենթակայությունից:

Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռքբերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից: Հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրում են, թե հանրակրթական հիմնական ծրագրերի կրթական աստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

1.3 Սաների քննադատական մտածողության ձևավորումը նախակրթական հաստատությունում

Սաների քննադատական մտածողության տեխնոլոգիան ես դիտում եմ որպես հիրմնակիան դպրոցում կիրառելի ակտիվ և ադապտիվ մանկավարժական տեխնոլոգիա, քանի որ այն ուղղված է սաների պասսիվ վերարտադրողի դերը ակտիվ մասնակցի դերով փոխարինելուն, սաների բնականոն զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելուն, երեխաների տարիքային ու անհատական առանձնահատկություններին համապատասխան պայմաններ, աշխատանքի տեմպ ու կազմակերպման ձև ապահովելուն:

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումն իրականացվում է ըստ հստակ սահմանված փուլերի՝ խթանում, իմաստավորում և կշռադատում /ԽԻԿ համակարգ/: Այս համակարգն ուղղված է սաների ճանաչողական կարողությունների զարգացմանը, որի շնորհիվ խթանվում ու վեր են հանվում սաների ունեցած գիտելիքները, իմաստավորվում և կշռադատվում է ուսուցանվող նյութը՝ վերլուծության, համադրության, համեմատությունների ու եզրահանգումների միջոցով: Քննադատական մտածողության տեխնոլոգիան հանդես է գալիս որոշակի մեթոդախմբով, ընդ որում յուրաքանչյուր մեթոդ կիրառվում է ԽԻԿ համակարգի կոնկրետ փուլում՝ ելնելով տվյալ մեթոդի նպատակներից:

Նախակրթարանում դասերին քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը, կարծում եմ, կլինի արդյունավետ մի շարք մանկավարժական պայմանների առկայության դեպքում.

- . բարենպաստ և զարգացնող կրթական միջավայրի ապահովում,
- . սաների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառում,
- . ուսուցման գործընթացի միջոցների, մեթոդների, ընթացակարգի ճիշտ

ընտրություն,

- . ուսումնական գործունեության բազմազան տեսակների կիրառում,
- . ուսման դրական ու ներքին դրդապատճառների ձևավորում,
- . դասարանում դրական հոգեբանական մթնոլորտի ապահովում,
- . ուսուցչի մասնագիտական պատրաստվածության առկայություն⁹:

Սաների քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման արդյունավետությունը մեծապես կախված է իմ վարպետությունից: Այս առարկաների դասերին քննադատական մտածողության տեխնոլոգիան ներառում է մի շարք մանկավարժական տեխնոլոգիաների՝ մասնավորապես պրոբլեմային ուսուցման, կոլեկտիվ ուսուցման և խաղային ուսուցման տեխնոլոգիաների որոշակի տարրեր, խթանում է նախադպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացումը և ուսումնական ակտիվությունը:

Այսպիսով, նախակրթարանում դասերին քննադատական մտածողության մեթոդների կիրառմամբ ընթացող դասերի ժամանակ սաները ընդգրկվում են դասապրոցեսի մեջ՝ մինչև նոր նյութի հաղորդումը (խթանում), նյութի մատուցման ընթացքում (իմաստի ընկալում) և նյութը յուրացնելուց հետո (կշռադատում): Այս համակարգը հայտնի է որպես ԽԻԿ /հապավումով/ համակարգ¹⁰:

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև յուրացվող գիտելիքները դարձնում է կիրառելի, օժանդակում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, խթանում սաների ստեղծագործական մտածողությունը¹¹:

⁹ Հարությունյան Գ.Ն., «Քննադատական մտածողության զարգացման մեթոդները տարրական դասարաններում», «Նախաշավիղ», /Գիտամեթոդական հանդես/, 1S15-6, 2004թ., էջ 4-11:

¹⁰ Հարությունյան Գ.Ն., «Ուսուցման արդի նպատակների իրականացումը «Քննադատական մտածողության զարգացման» մեթոդների միջոցով /տարրական դպրոցի օրինակով/», «Մխիթար Գոշ», /Գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ/3(7), 2005թ., էջ 79-82:

¹¹ Հարությունյան Գ.Ն., «Քննադատական մտածողության տեխնոլոգիան ուղղված մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացմանը», «Մանկավարժություն», /Գիտամեթոդական վերլուծական ամսագիր/, 1S16, 2012թ., էջ 28-33:

Նախակրթական հաստատությունում ուսուցիչը կարող է ցույց տալ սանին փաստերի միջև եղած օրինաչափությունները, բացատրել այս կամ այն երևույթը: Սակայն սանը կարող է առնչվել որևէ ինֆորմացիայի և ստիպված լինել ինքնուրույն պատասխաններ գտնել: Պետք է զարգացնել սաների ակտիվությունն ու հասցնել նրան, որ նա մշտապես զգա ավելի լայն փաստեր ու երևույթներ իմաստավորելու պահանջ: Պրոբլեմի լուծման եղանակները և մոտեցումը միաժամանակ ցույց է տալիս առհասարակ աշխարհայացքային այլ պրոբլեմների լուծման եղանակները: Արդյունքում սանի մոտ ձևավորվում է ընդհանուր մոտեցում վերլուծության նկատմամբ առհասարակ, որը հանգեցնում է սոցիալական երևույթների իմաստավորման և հասանելի որոշակի պրոբլեմների լուծման: Որպես քննադատական մտածողության դրսևորումներ՝ տվյալ պատմվածքում կարևորում են պատճառահետևանքային կապերի վերլուծության, փաստերն ու երևույթները գնահատելու կարողությունները: Վերջիններս համարվում են «մտածողության» հայեցակարգի կարևոր բաղկացուցիչներ: Որպես ներգործության միջոց՝ նախընտրելի է կիրառել բաց հարցադրումների հետևյալ տեսակները՝ Ինչու՞, Ի՞նչ հետևանքների է հանգեցնում, Ինչպե՞ս եք գնահատում....: Ընդ որում այդ երեք տեսակի հարցերի միջոցով կառուցվում է պատճառահետևանքային կապերի տրամաբանական ամբողջական մեկ շղթա:

Հարցադրումների միջոցով իրականացվող ուսումնառությունը հնարավորություն կտա սանին գտնել իրեն տրված հարցի պատասխանը՝ կիրառելով իր գիտելիքները, ունեցած տեղեկույթը, նաև առաջադրել հարցեր, գործի դնել սեփական աշխարհայացքը: Այս առումով բավականին մեծ է ուսուցչի դերը: Նրա խնդիրն է ճիշտ ձևակերպված հարցերի միջոցով նպաստել սաների մտածողության զարգացմանը:

Դասավանդման ընթացքում կարևորում են այն հանգամանքը, որ սանը մտածի պատմական գիտության բովանդակության ու նշանակության մասին: Վերլուծությունները փաստում են, որ հնարավոր է ուսուցման միջոցով զարգացնել ՔՄ հմտություններ: Այդ նպատակով նախընտրելի է բաց հարցերի կիրառումը: Դրանք մեծացնում են սաների հետաքրքրությունը թեմայի նկատմամբ և կարող են մոտիվացնող նշանակություն ունենալ: Սանը փորձում է առաջադրված խնդրի

լուծման նոր ուղիներ փնտրել: Բաց հարցերը դրդում են սանին փաստերի վերլուծության, զուգահեռների որոնման, հիպոթեզի առաջադրման, ձևավորում են հստակ կողմնորոշիչ մոտեցում ընթացիկ թեմայի առավել կարևոր խնդիրների հանդեպ: Արդյունքում պատմական համապատասխան նյութի վերլուծության շնորհիվ սաների մոտ ձևավորվում են փոխանցելի հմտություններ, որոնք թույլ են տալիս նրանց ցանկացած իրավիճակում անել հիմնավորված եզրակացություններ, կանխատեսել հնարավոր հետևանքները, իսկ գնահատելիս լինել շրջահայաց, փաստերն ու երևույթները դիտարկել տարբեր տեսանկյուններից, չչտապել դատողություններ անելիս:

Յուրաքանչյուր առարկայի ծրագրով նախատեսված գիտելիքների ուսուցումը չի կարող երբեք իր մեջ ընդգրկել այն բոլոր գիտելիքներն ու հասկացությունները, որոնք երեխան պետք է ստանա այդ ուսումնական առարկայից: Ծրագրում տրվածը միայն այն հիմնականն է, որ անհրաժեշտ է տվյալ առարկայից ընդհանուր գաղափար տալու համար, իսկ մնացածը երեխաներն իրեն պետք է ինքնուրույն կերպով ստանան շրջապատից ու գրքերից:

Ինքնուրույն ընթերցանություն կազմակերպելիս ես նախադարոցականների մեջ սերմանում եմ ընթերցասիրություն, զարգացնել գեղարվեստական ստեղծագործության գաղափարը հասկանալու, եզրահանգումներ, ընդհանրացումներ անելու կարողություններ: Նպաստել նրանց մեջ անձնային բարձրարժեք որակների զարգացմանը, գրագետ ընթերցողի, կարդալու պահանջմունք ունեցող քաղաքացու դաստիարակմանը:

Եզրակացություն

Այսպիսով, վերլուծելով վերոնշյալ թեման, եկա այն եզրահանգման, որ հասարակական բուռն զարգացումները, ժամանակակից կրթական բարեփոխումները կյանքի են կոչել նոր՝ տնտեսական, գիտական, մշակութային և այլ պահանջներ, որոնք էլ պայմանավորել են մանկավարժական գործընթացի արմատական փոփոխությունները՝ ուսուցիչ-սան հարաբերությունների վերանայում, դասավանդման նոր մեթոդների և ձևերի, մանկավարժական նոր տեխնոլոգիաների որոնում ու կիրառում և այլն: Ժամանակակից ուսուցման գործընթացում կրթության հիմնախնդիրների շարքում իր կարևոր տեղն ունի սաների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը, որն այսօր դիտարկվում է որպես հասարակական պահանջ և կրթության արդի խնդիր: Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիա, ունի բավականին հին արմատներ: Քննադատական մտածողության տեխնոլոգիան ներառում է մի շարք մանկավարժական տեխնոլոգիաների՝ մասնավորապես պրոբլեմային ուսուցման, կոլեկտիվ ուսուցման և խաղային ուսուցման տեխնոլոգիաների որոշակի տարրեր, խթանում է նախադպրոցականի ճանաչողական կարողությունների զարգացումը և ուսումնական ակտիվությունը:

Նախակրթարան մուտք գործող նորարարական մանկավարժական տեխնոլոգիաների թվին է պատկանում քննադական մտածողության զարգացման տեսությունը: «Քննադատական մտածողություն» եզրույթն առաջին հայացքից բացասական երանգ է պարունակում, քանզի այն զուգորդվում է «քննադատել» բառին: Սակայն այս բառը ներառում է «քննել» և «դատել» բառ-հասկացությունները: Այսինքն, իմաստն է՝ որևէ հարց քննել, զննել տարբեր տեսանկյուններից, ապա դատել և եզրահանգում կատարել: Քննադատական մտածողության խթանման բազմաթիվ մեթոդներից յուրաքանչյուրի արդյունավետ կիրառումը դասարանում ենթադրում է փոխադարձ վստահության մթնոլորտի առկայություն: Յուրաքանչյուր երեխա պետք է լինի ազատ ու անկաշկանդ, կարողանա մտածել, ներկայացնել իր տեսակետը, մտքեր փոխանակել ու լսել դիմացինին, հաղորդակցվել և յուրաքանչյուր

դասին ունենալ իր՝ թեկուզ փոքրիկ ներդրումը: Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև յուրացվող գիտելիքները դարձնում է կիրառելի, օժանդակում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, խթանում սաների ստեղծագործական մտածողությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հարությունյան Գ.Ն., «Խաղը որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական հետաքրքրությունների խթանման միջոց», «Նախաշավիղ», /Գիտամեթոդական հանդես/, 2003թ.
2. Հարությունյան Գ.Ն., «Ուսուցման արդի նպատակների իրականացումը «Քննադատական մտածողության զարգացման» մեթոդների միջոցով /տարրական դպրոցի օրինակով/», «Մխիթար Գոշ», /Գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ/3(7), 2005թ.
3. Հարությունյան Գ.Ն., «Քննադատական մտածողության զարգացման մեթոդները տարրական դասարաններում», «Նախաշավիղ», /Գիտամեթոդական հանդես/, 1S15-6, 2004թ.
4. Հարությունյան Գ.Ն., «Քննադատական մտածողության տեխնոլոգիան ուղղված մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացմանը», «Մանկավարժություն», /Գիտամեթոդական վերլուծական ամսագիր/, 1S16, 2012թ.
5. Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով, ուղեցույց, 1-7 պրակ, 1988.
6. Ennis, R. H. (1962). A Concept of Critical Thinking. Harvard Educational Review, 29.
7. Ennis, R. H. (1989). Critical Thinking and Subject Specificity: Clarification and Needed Research. Educational Researcher, 18 (3), 4-10.
8. Ennis, R. H. (2008). Nationwide Testing of Critical Thinking for Higher Education: Vigilance Required. Teaching Philosophy, 31 (1), 1-26.
9. Glen, S. (1995). Developing Critical Thinking in Higher Education. Nurse Education Today, 15, pp. 170-176.
10. Gokhale, A. A. (1995). Collaborative Learning Enhances Critical Thinking. Journal of Technology Education, 7 (1), 22-30.
11. Gray, L. B. (2011). Gray, L., Bramhall, M., Garnett, K. Analysis of critical thinking skills across an international, cross-institutional student group. Internationalization of Pedagogy and Curriculum in Higher Education: Exploring New Frontiers. Coventry, England: The Higher Education Academy: Engineering Subject Centre. .
12. Major McKown, L. (1997, March). Improving Leadership Through Better Decision making: Fostering Critical Thinking. Retrieved September 14, 2011, from Air University: <http://www.au.af.mil/au/awc/awcgate/acsc/97-0506.pdf>

13. Moore, Z. B., Faltin, L., & Wright, M. (2010). Critical Thinking and International Postgraduate Students. *Discourse*, 3 (1), 63-94.
14. Scriven, M., & Paul, R. (1987). 8th Annual International Conference on Critical Thinking and Educational Reform.
15. Young, R. (1980). fostering Critical Thinking. In *New Directions for Teaching and Learning* (Vol. 3). San Francisco: Jossey-Bass.